«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ԱՐՑԱԽՈՒՄ XIII ԴԱՐՈՒՄ ԳՐՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Օվսաննա Խաչատրյան
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայցորդ,
Մաշտոցի անվան Մատենադարանի կրտսեր գիտաշխատող
ovsannakhachatryan@mail.ru
Գիտ. ղեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆ. Ա.Դոլուխանյան

Հայկական ձեռագիրը հայ ժողովրդի գոյության, ինքնադրսևորման, դարերի ընթացքում հաղթահարած դժվարին ուղին ցույց տվող գլխավոր վկան է, հայ մշակույթի կարևորագույն արժեքներից մեկը, որն ունի ոչ միայն պատմական, այլև գրական-գեղարվեստական արժեք[1]: Ձեռագիր գիրքը ստեղծվել է գրերի գյուտից սկսած՝ հիմնականում խոշոր վանքերին կից գործող գրչատներում, ապա նաև այլ վայրերում՝ քաղաքներում, գյուղերում, որոնք գրչության կենտրոններ լինելուց զատ, հոգևոր մշակույթի պահպանման և զարգացման առանցքային օջախներ էին: Ինչպես Հայաստանի տարբեր վայրերում, այնպես էլ Արցախում[2], սկսած ամենավաղ շրջանից գործել են գրչության կենտրոններ: Ցավոք, ստեղծված ձեռագրերի մեծ մասն այսօր ոչնչացված-կորսված է, սակայն եղածն էլ բավական է պատկերացում կազմելու տվյալ ժամանակաշրջանի մշակութային կյանքի մասին: Արցախի գրչության կենտրոններից են Գանձասարը, Մեծառանաց (Մեծիրանաց) Սբ. Հակոբա վանքը, Խաղավանքը, Դադիվանքը, Գտչավանքը, Շուշին, Խորանաշատը և այլն: Այս գրչակենտրոններում ոչ միայն գրվել, այլև պահել ու պահպանվել են աշխարհի տարբեր վայրերում ստեղծված արժեքավոր ձեռագիր մատյաններ:

Մեր հետազոտության նպատակն է ներկայացնել 13-րդ դարում Արցախի[3] տարբեր գրչակենտրոններում գրված ձեռագրական ժառանգությունը, որն այսօր պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, ներկայացնել վերջիններիս թեմատիկ և բովանդակային ընդգրկումները, հնարավորիս ճշտել ձեռագրերի գրչության ժամանակի, վայրի, գրչի հետ կապված և այլ հարցեր, վեր հանել ձեռագրերի հիշատակարանների գեղարվեստական և ժանրային առանձնահատկությունները: Այսօր Երևանի Մատենադարանում պահվում է 13-րդ դարում Արցախ աշխարհում[4] գրված 11 ձեռագիր: Այժմ անդրադառնանք այդ ձեռագրերին առանձին-առանձին.

Արցախի ամենահարուստ գրչության կենտրոնը Գանձասարն է: Այս վանքի մատենադարանում պահվել են ոչ միայն տեղում, այլև այլ վայրերում գրված և ընդօրինակված ձեռագրեր: Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է

---

[1] Հիշենք, թե ինչպես է ձեռագրի դերը հայ կյանքում կարևորել Դերենիկ Դեմիրճյանը «Գիրք ծաղկանց» հրաշալի պատմվածքում:

[2] Հայտնի է եղել նաև այս անուններով՝ Առան, Արացխ, Արդախ, Արձախ, Արձախա աշխարհ, Արցախամար աշխարհ, Գարգար, Խարեն, Խաչենք, Օրխիստինե, պատմական Մեծ Հայքի 15 նահանագներից մեկն է. մանրամասն տես Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 1, Երևան, 1986, էջ 506:

[3] 9-13-րդ դարերում Արցախը կոչվել է Խաչեն կամ Խաչենք: Միջնադարյան Արցախը հաճախ կոչվել է նաև՝ Ծավդեից աշխարհ, Խաչենք, Ղարաբաղ: Այն հյուսիսից հարևան է եղել Ուտիքին, արևելքից Փայտակարանին, իսկ արևմուտքից՝ Սյունիքին:

[4] Նկատի ունենք պատմական Արցախ նահանգը և հարակից շրջանները, որոնք հաճախ կոչվել են Արցախ աշխարհ:

Գանձասարում ընդօրինակված 13 ձեռագիր մատյան[1], որոնցից հնագույնը 13-րդ դարում գրված Ավետարանն է (ՄՄ ձեռ. 378) գրիչ և ծաղկող՝ Թորոս, ստացող՝ Վախթանգ-Տանգիկ և Խորիշահ: Ձեռագրի պատմությանը և ուսումնասիրություններին վերջերս անդրադարձել է Թամարա Մինասյանը «Արցախի գրչության կենտրոնները» գիրք-ալբոմում[2]: Ներքին Խաչենի գրչակենտրոններում են գրվել ՄՄ հ^{մր} 5669 (Ավետարան, գրված 1279 թվականին Վախթանգի պատվերով և Վարդանի ձեռքով[3]) և հ^{մր} 155՝ ձեռագրերը, որոնց ուսումնասիրությամբ զբաղվել են Գարեգին Հովսեփյանը[4] և Հրավարդ Հակոբյանը[5]: Ձեռ. հ^{մր} 155-ը՝ Մասունք Նոր կտակարանի, չունի գրչության ստույգ թվական, Գարեգին Հովսեփյանի կարծիքով ձեռագիրը գրվել է 1288 թվականին՝ հավանաբար Տփխիսում, իսկ Հ. Հակոբյանը կարծում է, որ այն գրվել է 1274-75 թվականներին և Արցախ-Ուտիք-Սյունիք միջավայրի արդյունքն է: Վստահաբար ձեռագիրը գրվել է 13-րդ դարում. գրիչ՝ «որդի Սարգսի եւ Թագուհւոյ», ստացողն է Վախթանգ պատրոնը, բովանդակում է Պողոս առաքյալի թղթերը, ունի 2 գրչի հիշատակարան: Այս ձեռագրի կարևոր առանձնահատկությունն այն է, որ 106բ էջում հանդիպում ենք պատվիրատուի՝ Վախթանգի դիմանկարին, որի արվեստաբանական քննությանը անդրադարձել է Հրավարդ Հակոբյանը. «Պատանի իշխանը նստած էր բարձր թիկնակով բազկաթոռին, որը ծածկված է զարդանախշերով: Նրա ծնկներին բաց Ավետարան կա: Իշխանը հագել է երկար մանուշակագույն հագուստ, իսկ գլխին ունի սրածայր մի գլխարկ, որը զարդարված է ժապավեններով: Խոշորաչք անմորուս նրա դեմքը շատ գեղեցիկ է: Բացի նրանից, որ այս դիմանկարն ազգագրական կարևոր արժեք ունի, այն ուշագրավ է նաև նրանով, որ մանրանկարիչը ջանացել է պահպանել բնօրինակի՝ մարդու հետ նմանությունը՝ չհեռանալով հանդերձ մանրանկարչական իր դպրոցին հատուկ ոճական առանձնահատկություններից»[6]:

Վերին Խաչենի նշանավոր գրչակենտրոն է Խաղավանքը, որտեղ գրված ձեռագրերից այժմ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է ընդամենը մեկ ձեռագիր՝ Թարգմանչաց Ավետարանը (ՄՄ ձեռ. 2743)[7]. այդպես է կոչվել պատմական Գարդման գավառի Թարգմանչաց վանքում[8] երկար ժամանակ՝ շուրջ մեկ դար, մնալու պատճառով. գրիչը Տիրացուն է, ծաղկողը Գրիգորը, ստացողը Յովհաննես քահանան: Ինչպես նշում է Արտաշես Մաթևոսյանը, ձեռագիրը բերվել է Գանձակի Թարգմանչաց վանքից Գ. Հովսեփյանի ձեռքով[9]: Ավետարանի մանրամասն քննությանը անդրադարձել է Արտաշես Մաթևոսյանը՝ Էջմիածնի տարբեր համարներում լույս տեսած հոդվածներում, իսկ Գարեգին Հովսեփյանը

---

[1] Այս մասին մանրամասն տես Հարությունյան Ք., Արցախյան մատենադարանը. երեկ եւ այսօր, «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողով, 15-18 սեպտեմբերի 2016 թ., Արցախ (ԼՂՀ) քք. Ստեփանակերտ, նյութերի ժողովածու, Երևան, 2016, էջ 259:

[2] Տես Մինասյան Թ., Արցախի գրչութեան կենտրոնները, Երեւան, 2015, 12-14:

[3] Ձեռ. 5669, թերթ 206բ-7ա:

[4] Հովսեփյան Գ., Վախտանգ որդի Ումեկա և նորա տոհմը, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, Երևան, 1983, էջ 217-233:

[5] Հակոբյան Հ., Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը 13-14դդ դարերում, Երևան, 1989, էջ 65-71:

[6] Հակոբյան Հ., Արցախի մանրանկարչական արվեստը, Երևան, 2014, էջ 14:

[7] Թերթ 374, նյութ՝ մագաղաթ, 30x23, գիր՝ բոլորգիծ երկաթագիր, տող՝ 17:

[8] 4-րդ դարի հայկական վանք՝ պատմական Մեծ Հայքի Ուտիք նահանգի Գարդման գավառում, ներկայումս՝ Ադրբեջանի Դաշքեսանի շրջանի Խաչակապ գյուղից 1,5 կմ հյուսիս:

[9] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ. դար, կազմեց Մաթևոսյան Ա., 1984, էջ 180:

գիտական շրջանառության մեջ է դրել Ավետարանի մանրանկարները[1], որոնց արվեստաբանական նկարագրությունը կատարել է Լ. Չուգասզյանը[2]: Ինչպես վերը նշեցինք, հայտնի գրչության կենտրոն էր Խորանաշատը: Գտնվում է Մեծ Հայքի Ուտիք աշխարհի Փառիսոս գավառում, այժմ Տավուշի մարզի Չինարի գյուղից 1 կիլոմետր հյուսիս-արևելք: Այն հիմնադրել է Վանական վարդապետը, որի մասին վկայություն կա 1224 թվականին Խորանաշատում գրված մի ձեռագրի հիշատակարանում. «... եւ շինող եւ առաջնորդ վանիցս Վանական վարդապետ հաստատեաց...»[3]: Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են Խորանաշատում տարբեր դարերում ընդօրինակված ձեռագրերից 10 օրինակ, որոնցից 6-ը՝ 13-րդ դարից: 1223 թվականին Խորանաշատում Ստեփանոս Աղթամարցու ձեռքով գրվել է մի ձեռագիր (ՄՄ ձեռ. 2101), որը Ժողովածու է, բովանդակում է՝ «Բանք առասպելախօս, Բանք իմաստնոց»: Ունի գրչի հիշատակարան, որում գրիչը Վանական վարդապետի կերպարի վեհությունը ներկայացնելու համար գեղարվեստական պատկերավորման միջոցներից օգտագործել է համեմատությունը. «... առ ոտս աղփաճեմ եւ աստուածարդիւնական վարդապետիս Վանականի, որ փայլէ իր ժամանակի, որպէս |86ա|զաստղ առաւաւտու եւ ի կողմանց հիւսիսոյ նահանգիս Թորգոմա ամպ հոգեցաւղ հանապազ հոսելով զաստուածաիսսն զբանաւորաց ոռոգանէ երկիր...»[4]: Հիշատակարանից հայտնի է դառնում ոչ միայն գրչության վայրը, թիվը, գրչի անունը՝ Ստեփանոս Աղթամարցի, այլև տեղեկություն այն մասին, որ գրիչը Վանական վարդապետի աշակերտն էր. «...ձեռամբ Ստ[եփ]անոս կրթեալ առ Վանական վ[ար]դապետիս...»[5]: Մյուս ձեռագիրը գրվել է 1224 թվականին, Ավետարան է (ՄՄ ձեռ. 4823)[6], որի գրիչը և ծաղկողը անհայտ են, պատվիրատուն, ինչպես կարդում ենք հիշատակարանում[7] Նանենին է՝ Ջաջուռ Խաղբակյանի դուստրը եւ Կուկ Սևադյացի կինը: Խորանաշատի Ավետարանին անդրադարձել են Գ. Սրվանձտյանցը[8], Գ. Հովսեփյանը[9], Ա. Սվիրինը, Վ. Լազարևը[10], Դուրնովոն[11], Հրավարդ Հակոբյանը[12], վերջերս այս ձեռագրի պատմությանը անդրադարձել է նաև Թամարա Մինասյանը[13]: Մաշտոցի անվան Մատենադարանում է պահվում հ՝մր 2273 ձեռագիրը[14] գրված 1252 թվին Գրիգոր կամ Գրիգորիս քահանայի ձեռքով, ով Վանական վարդապետի աշակերտն ու եղբորորդին էր, ձեռագրի ստացողը Ստեփանոս քահանան էր: Այն Ժողովածու է, բովանդակում է հոգևոր

---

[1] Տես Յովսէփեան Գ., Համառոտ տեղեկութիւններ Էջմիածնի մի քանի մանրանկարների մասին, «Անահիտ», Փարիզ, 1911, թ. 5-6:
[2] Չուգասզյան Լ., Գրիգոր ծաղկող, Երևան, 1986:
[3] Ձեռ. 4823, թերթ 317ա:
[4] Ձեռ. 2101, թերթ 85բ:
[5] Նույն տեղում, թերթ 204ա:
[6] Թերթ՝ 319, նյութ՝ մագաղաթ, 36x23, գիր՝ բոլորգիծ երկաթագիր, տող՝ 19:
[7] Ձեռ. 4823, թերթ 317ա:
[8] Սրվանձտեանց Գ., Թորոս Աղբար, Կ. Պոլիս, 1884, էջ 272-275:
[9] Հովսէփեան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մեջ, Վաղարշապատ, 1928, էջ 34:
[10] Лазарев В. Н., История византийской живописи, М. 1947, էջ 12:
[11] Дурново Л. А., Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979, ст., 32:
[12] Հակոբյան Հ., Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը, 13-14-րդ դդ., էջ 51-62:
[13] Մինասյան Թ., Արցախի գրչության կենտրոնները, 65:
[14] Դրոշմազարդ շագանակագույն կաշի, թերթ 364, նյութ՝ թուղթ, 17x12, գիր՝ բոլորգիր, տող՝ 26-28:

թեմաներով գործեր: Ունի 4 պատառիկ պահպանակ[1], գրչի յիշատակարաններ: Որքան էլ հիշատակարանները կաղապարային բնույթ ունեն, այդուամենայնիվ շատ հաճախ ծառայում են իբրև պատմական սկզբնաղբյուր՝ պատասխաններ տալով նույնիսկ լուրջ պատմական հարցերի: Ժամանակի մարդու ձեռքով գրված այս հիշատակարանը նկարագրում է 13-րդ դարում մոնղոլական արշավանքների պատճառով դժվարին դրության մեջ հայտնված հայ ժողովրդի վիճակը. «...ի նեղ եւ դառն ժամանակիս այսմիկ եւ ի դարուս հետեւման, եւ այս վասն մեղաց մերոց, զի բազմացաւ անհնարին վիշտք եւ նեղութիւնք ի վերայ ամենայն աշխարհի ի ձեռն անաւրէն եւ այլակերպ զաւրուն նետողաց, որով բազմացեալ են քան զաստեղս եւ քան զաւազ ծովու»[2]: Այստեղ խոսքը ավելի ազդեցիկ և գեղարվեստական դարձնելու համար գրիչը պատկերավորման միջոցներից դիմել է չափազանցությանը «...բազմացեալ են քան զաստեղս եւ քան զաւազ ծովու»[3]: 1255 թվականին նույն գրչի ձեռքով ընդօրինակվում է մեկ այլ Ժողովածու[4], որն այժմ Մաշտոցյան Մատենադարանի հ^մր^ 6106 ձեռագիրն է: Բովանդակում է. «Հարցմունք եւ Պատասխանիք: Ներսես Շնորհալւոյ Մեկնութիւն խորանացն Աւետարանի: Պատճառ աղութեան ջրոց»[5]: Հիշատակարանից պարզ է դառնում, որ ձեռագիրը գրվել է Խորանաշատում 1255 թվականին Գրիգորիս գրչի ձեռքով, իսկ պատվիրատուն և ստացողը Թադե և Հայրապետ եղբայրներն են[6]: 13-րդ դարում Սարգիս գրչի ձեռքով ընդօրինակվում է ևս մի Ժողովածու[7] (ՄՄ ձեռ. 5452), որը բովանդակում է հոգևոր թեմաներով գրված նյութեր[8]: Ձեռագրի ստացողը Մխիթար ռաբունապետն է, ում մասին գրիչը գովեստի և մեծարանքի խոսքերով է պատմում՝ «...զգերահռչակ եւ բարերջանիկ վսեմախոհ ռաբունին Մխիթար՝ զստացող տառիս յիշեսջի՛ք ի Տէր Յիսուս...»[9]: 1283 թվականին Մարտիրոս գրչի ձեռքով ընդօրինակված ձեռագիրը Մատենադարանի հ^մր^ 1563-ն է, այն բովանդակում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկը, նաև այլ նյութեր՝ «Սարգիս վարդապետի ասացեալ յաղագս խոստովանութեան», եւ «[Ի Յակոբայ թղթոյ մեկնութենէ Սարգսի Շնորհալւոյ]»: Ձեռագիրն ունի 3 գրչի հիշատակարան, որոնցից ամենածավալունը երրորդ չափածո հիշատակարանն է. սովորաբար գրիչները չափածո էին գրում խոսքը ավելի ազդեցիկ, գեղարվեստական դարձնելու, կամ էլ հաճախ սեփական տաղանդը ցուցադրելու համար.

«Ի ՉԼԲ. (1283) թվ<u>ի</u>ս գրեցաւ
Գիրքս Գրիգորի Նարիկեցի,
Աղաւթք եւ հառաչանք եւ պաղատանք [ո]ղոր<u>ծ</u>մագին,
Ի վանս Վանական վարդապետ[ի],
Առաջ[նո]րդ [գոլ]ով Պետրոս վարդապետի,
Ձեռամբ [Մա]ղտիրոսի բազմամեղ ծառայի,
Ի ծերութեան ժամանակի...»[10]:

---

[1] Մեկ այլ ձեռագրից մնացած պատառիկ՝ կցուած տվյալ ձեռագրին որպես պահպանակ:
[2] Ձեռ. 2273, թերթ 361ա:
[3] Նույն տեղում:
[4] ՄՄ ձեռ. 6106, թերթ՝ 274, նյութ՝ թուղթ, 12x8, գիր՝ բոլորգիր, տող՝ 24:
[5] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հտ. Բ., կազմեցին՝ Եգանյան Օ., Ձեյթունյան Ա., Անթաբյան Փ., խմբ.՝ Խաչիկյանի Լ., Մնացականյանի Ա., Երևան, 1970, էջ 252:
[6] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ. դար, կազմեց Մաթևոսյան Ա. Ս., էջ 281-282:
[7] ՄՄ ձեռ. 5452, թերթ՝ 120, նյութ՝ թուղթ, 24.5x15, գիր՝ բոլորգիր, տող՝ 26:
[8] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հտ. Բ., էջ 109-110:
[9] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ. դար, էջ 926:
[10] Ձեռ. 1563, թերթ 336բ:

Շամախու թեմի ձեռագրերի հավաքածուի մեջ է մտել 1296 թվականին Աղիտու անապատում Մխիթար քահանայի ձեռքով գրված Ավետարանը, որն այժմ պահվում է Մաշտոցի անվ. Մատենադարանում 7353 համարի տակ[1]:

Այսպես, այսօր Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են 13-րդ դարից մեզ հասած՝ 1 Ավետարան Գանձասարից, Ներքին Խաչենի գրչակենտրոններից՝ 2 ձեռագիր (Աւետարան, Մասունք Նոր կտակարանի), 1 Ավետարան Խադավաքից, Խորանաշատից 6 ձեռագիր (4 Ժողովածու, 1 Ավետարան, 1 Գրիգոր Նարեկացի, Մատյան Ողբերգության), Աղիտու անապատից 1 Ավետարան՝ ինչպես վերը նշեցինք ընդամենը 11 ձեռագիր: Ձեռագրերից յուրաքանչյուրն ունի իր պատմությունը, գրական-ժանրային առանձնահատկությունը: Պարզ է, որ այս ժամանակաշրջանում գրվել են հիմնականում հոգևոր թեմաներով, և եթե մենք այս փոքրիկ հավաքածուի մեջ փորձենք առանձնացնել միջնադարյան գրականության ժանրերը, ապա միայն կարող ենք վերցնել Նարեկացու «Մատեանը» և ձեռագրերի հիշատակարանները, որոնք ձեռագրերի անբաժանելի մասը կազմելով՝ միաժամանակ առաձին ժանր[2] են համարվում. լինում են ածակ ու չափածո:

Այսպիսով, Արցախ աշխարհում գրված ձեռագրերի պահպանումը, ուսումնասիրումը և վերջիններիս միջոցով Արցախի դարավոր մշակույթի վերհանումն ի ցույց համայն աշխարհի, պետք է լինի մեզանից յուրաքանչյուրի առաքելությունը և նպատակը:

Օվսաննա Խաչատրյան

ԱՐՑԱԽՈՒՄ XIII ԴԱՐՈՒՄ ԳՐՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Բանալի բառեր՝ *ձեռագիր, Արցախ, ժանր, գրիչ, հիշատակարան, վանք*

Հետազոտության նպատակն է ներկայացնել XIII դարում Արցախի տարբեր գրչակենտրոններում գրված և այժմ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագրական ժառանգությունը, ցույց տալ վերջիններիս թեմատիկ-բովանդակային ընդգրկումները, հիշատակարանների գեղարվեստական ու ժանրային առանձնահատկությունները, հնարավորինս ճշտել ձեռագրի գրչության ժամանակի, վայրի, գրչի, ստացողի հետ կապված և այլ հարցեր: Այսօր Երևանի Մատենադարանում պահվում է XIII դարում Արցախ աշխարհում գրված 11 ձեռագիր՝ Ավետարաններ, Ժողովածուներ, Գրիգոր Նարեկացու «Մատյան Ողբերգության» երկը:

[1] Թավշապատ ստվարաթուղթ, թերթ՝ 305, նյութ՝ թուղթ, 31x23.5, գիր՝ խոշոր բոլորգիր, տող՝ 19:

[2] Ժանրերը գրական երկերի տեսակներ են, որոնք օժտված են ձևի և բովանդակության կայուն հատկանիշներով, տե՛ս Ջրբաշյան Է., Գրականության տեսություն, Երևան, 1980, էջ 341-345:

Овсанна Хачатрян

РУКОПИСИ НАПИСАННЫЕ В АРЦАХЕ В XIII ВЕКЕ

Ключевые слова: *рукопись, Арцах, жанр, писец, колофон, монастырь*

Целью этого исследования является обзор наследия разных рукописных центров Арцаха в XIII-ом веке, хранящееся в Институте древних рукописей имени Месропа Маштоца-Матенадаран, а также описание тематического содержания, художественных и жанровых особенностей колофонов данных рукописей. Сегодня в Ереванском Матенадаране хранятся 11 рукописей, написанные в Арцахе в XIII-ом веке: Евангелия, сборники, "Книга скорбных песнопений» св. Григора Нарекаци.

Ovsanna Khachatryan

MANUSCRIPTS WRITTEN IN ARTSAKH IN THE XIII CENTURY

Key words: *manuscript, Artsakh, genre, scribe, colophon, monastery*

The aim of this article is the study of manuscripts copied in the XIII century in various scribal centers of Artsakh. The mentioned manuscripts are preserved in the Institute of Ancient Manuscripts-Matenadaran, named after Mesrop Mashtots. In the article there are presented the thematic features of contents of the manuscripts, as well as peculiarities of lyrics and genres of the colophons. These 11 manuscripts copied in Artsakh in the XIII century include Gospels, miscellanea, "The Book of Lamentation" by St. Grigor Narekatsi.